

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

... Խմբագրապետ Տէր .

Ընդ զբոյս կը յղեմ Ձեզ Տարնայ Հայոյ վիճակալիլը (որոյ մէկ օրինակը քանի մ' օր առաջ Պատրիարքարանի տուած եմ) խնդրելով որ եթէ հարկ և արժան դատիք, հրատարակէք և զայս Ձեր լրագրոյն միջնոցաւ :

20 Նոյ. 1880 Կ. Պոլիս

ԳՐԻԳՈՐԻՍ ՍՐՔԵՊԻՍԿԻՆՊՈՍ
Տարնայ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒ ԶՍՅՈՑ

ՏԱՐՈՆՈՑ

Մուչ Աւան	Միւթ սրճիթիւն	Միւթ Գալու	Մանակերտ	Պուլանք Վերին	Պուլանք Ներքին	Վարդով	Խլաթ	Խոյթ	Բռնաչէն	Սառնա—Շատախ	Մոսկան	Խնուս (6)
95 (5)	25	16	10	8	25	15	14	36	31	24	295	12.085
959 (1)	4350	487	1696	665	249	1001	185	186	518	515	1276	111.185
6005	59.726	5089	15.589	6558	2005	3658	1548	1499	3937	3786	14.820	4608

- (1) Այս թուոյն մէջ են Մշոյ 40 տուն Հոռով. Հայք 244 արու և 54 բռնակոյն և 4 տուն Բողոք. Հայք 40 արու և 54 բռնակոյն :
- (2) Միայն Մշոյ քաղաքի 1670 տունը Թուրք—Խալաթ են, իսկ միւս գիւղօրէնք մէջ նշանակածները Քիւրտ են :
- (3) Այս 95 գիւղօրէնք մէջ են Օղունք, Առինչ, Նորչէն գիւղերը, որոց բռնակոյնքը Հոռով. Հայք են, և քանիցս աղգահամարը ուղղուեցաւ, սակայն ամենք մեր մեծաւորներէն այդպիսի պատուէր մը չունինք ըսելով չտունին : Այս երեք գիւղերը 430 տան չափ են և ամենայն վստահութեամբ կրնամք աւելցնել մեր հաշուոյն վրայ 5200 անձն արու և 54 :
- (4) Միայն Քրդաց գիւղերու տանց թիւը նշանակուած է այն վճիռադրին մէջ, որ խառն կը ընտրեն ընդ Հայս, ամբողջ Բիւրտ բռնակոյն ունեցող զիւրօրէնք անունները և տանց թիւը նշանակուած չեն :
- (5) Վիճակագրիս մէջ նշանակեալ Գայմազամուլիւնը և Միւտիւրուլիւնը, բոլորն ալ Մշոյ Միւթէսարըֆութեան կը վերաբերէին թէ և : Բայց երբ Բաղէ Վիլայէթ ելաւ, Մուշը Վանայ կուսակալութենէն զատելով հետեւեալ բաժան մամբ Բաղէնու կուսակալութեան յանձնուեցաւ :
- Ա. Բաղէ Վիլայէթ .
- Բ. Չուքուրի (Մշոյ գաւառի մէկ մասը) Միւտիւրուլիւնը որ առաջ Խլաթայ Գայմազամուլիւն տակ էր և Մշոյ Միւթէսարըֆութեան կը վերաբերէր, Մուշէն՝ այսինքն Խլաթէն առնուելով Բաղէնու արուեցաւ :
- Գ. Սառնա, որ Միւտիւրուլիւն էր և Մշոյ Միւթէսարըֆութեան տակ, բաժնուելով Արինչի Միւթէսարըֆութեան տակ դրուեցաւ (թէ և ցարք Արինչի Միւթէսարըֆութեան ալ չէ հաստատուած :
- Դ. Խոյթ և Բռնաչէն՝ որ Գայմազամուլիւն էր և Մշոյ Միւթէսարըֆութեան կը վերաբերէր, Միւտիւրուլիւն ըլլալով Մոսկանի Գայմազամուլիւն տըրուեցաւ :
- Ե. Մոսկանի Գայմազամուլիւնը՝ որ Մշոյ Միւթէսարըֆութեան տակ էր, Բաղէնու արուեցաւ :
- Զ. Արինչի Նահիէն, որ Տիարպէրիի կուսակալութեան տակ Միւտիւրուլիւն էր, Տիարպէրիի Նախտան, Խլան, Հաղու և Կարնայ Այգնիւկ ու Ճաւաղուր Նահիէններուն հետ միացնելով Միւթէսարըֆութեան վերածեցաւ, և Բաղէնու կուսակալութեան տակ դրուեցաւ :
- (6) Խնուս, որ քաղաքականապէս Կարնայ իշխանութեան տակ ըլլալով հանդերձ Մշոյ Առաջնորդութեան կը վերաբերէր, մօտերս Կարնայ Առաջնորդութեան արուեցաւ :

ԲԱՆԱԳՐԱՆ

Յունաստանն պատերազմի պատրաստութիւնը կը շարունակէ և ամեն նշաններ կը ցուցնեն թէ անանց արտաքին օգնութեան սպառնալու զինուոց բազմը պիտի փորձէ : Հելլենաց կարծիքն յայտնող գրութիւն մը, որ ի պատասխանի թալմի լրագրին հրատարակուած է, կը պնդէ թէ տէրութիւնը կրնային իրենց կամքը Բ. Գրան ընդունել տայ, բայց չըրին, և կը յարէ : «Մեծ տէրութիւնը և նա մանաւանդ Անգլիա, Գաղլիա և Իտալիա, խիստ տխուր կերպարանօք ներկայացան, կերպարանք մը, որ տըլուր լինելէ ևս վատթիւ է, քան զի իրենց խոստումը չպահանջին, գաշադրութեան ներքեւ գրուած իրենց ստորագրութիւնն անպատուեցին : Նոքա այդ ընթացքը բռնաւոր չէին համարձակեր, եթէ խաբարը՝ փոխանակ փոքրիկ Յունաստանի՝ իրենցմէ մին լինէր : Անգլիայ, Գաղլիայ և Իտալիայ կառավարութիւնք՝ իրենց այնչափ վեհանքն և զօրուոր խօսքերէն յետոյ շատ փոքր պիտի երեւին նոյն իսկ իրենց Ժողովրդաց աչքին առջև : Այն քաջ և հզօր անոյեաններն, որք այնչափ

ճոռմաբանութեամբ կը հռչակէին իրենց դիտաւորութիւնն արդարութեան և մարդկութեան դատը պաշտպանելու համար, պարզապէս չնչին ասպետներ կը դառնան երբ կարգը խօսքէ գործի գայ : »

Այս դառն դանդաղանքներն Եւրոպիոյ և նորա գիւտանագիտայ կ'ուղղուին, որք զՅունաստան խաբար են եղեր պատեր խոստումներ տալով, և դատաւիք եղած են յորժամ գործով օգնել պէտք կը լինի :

Բայց կարծեմք այս գանգատներն իրաւացի չեն : Ըստ Սալիսպլըրի այս անգամ իւր խօսած ճաւանչ մէջ կ'ըսէր թէ Անգլիա օգնութեան խոստում տուած չէ Յունաստանի, և Գաղլիայ Գերլին Տեռալիք նոյնը կը հաստատէ :

Ինչ որ է, նոյն Հելլենացի գրիչը զոր վերը կը յիշեմք, կ'ըսէ թէ Յունաստան 1880ին ևս ճիշդ 1821ին եղածին նման խաբարութեան և դաւաճանութեան զօհ կը լինի և մեծ տէրութիւններէն օգնութիւն գրտնելու յոյս չունի : Հելլենաց թաւաւորին վերջին ատենախօսութիւնն ևս կը ցուցնէր թէ Յունաստանն միմիայն ինք իւր վրայ կը դնէ յոյսն, և որ և է պարագայի մէջ մենամարտի ասպարէզը պիտի նետուի, քան զի նորա համար դոյաութեան և պատ-

ւոյ և կամ նիւթական կամ բարոյական կործանման խնդիր մը կայ : Յունաստան կրնայ վնասուիլ, կրնան իւր գիւղերն ու քաղաքներն աւերակ դառնալ կոյմ նուաճիլ, այսու ամենայնիւ Հելլենք գործելու որս չունի առած են :

Այսպիսի պայտարարութեանց մէջ բանաստեղծական երեւակայութիւնն անհրաժեշտ էր իրազեայ ըսն թէ լուրջ խորհրդածութիւնն և ուղիղ տրամաբանութիւնն : Հելլենք կը յուսան որ թէ յաղթեն և թէ յաղթուին, անպատճառ իրենք պիտի չահնին : Իրենց աչաց առեւելունին Սերպիոյ և Պուլլարիոյ օրինակները : Սերպիա յաղթուեցաւ, և Պուլլարաց պայտարարութիւնը նուաճեցաւ, այսու ամենայնիւ իրենք բազմաձեւք ի դուրս ելաւ, չնորհիւ Ռուսիոյ պաշտպանութեան, Սալիսպլըրի Հելլենաց գիտել կը տորի թէ ամեն ժամանակ այն օրինակները չեն կրնար ճիշդ լինել, և Ռուսական Կորս լրագրերը կը յայտարարէ թէ Ռուսիա այժմ իւր ներքին վերաշինութեամբ զբաղեալ է, և հակառակ իւր բոլոր պատանական համակրութեան, ոչ կ'աթիլ մարին կրնայ թափել և ոչ Բոսնի մը ծախք ընել ի նպատ Յունաստանի :

Այս Հելլենք արտաքին օգնութեան չափանելու համար այս աղգարարութիւնները կ'առնուն, բայց իրենք 1793ի Գաղլիական բաժկա վարներուն նման ամենայնիւ յանձն առնելու տրամադրութիւն կը ցուցեն, Աթէնքէն եկած վերջին լուրերը զնուորական պատրաստութեանց մեծ ժողովով շարունակելը կը ծանուցանեն և տէրութեանց ու մանց դեպքանքներն խրատները դեռ չեն կրցած անոնց առաջն առնելու, Յուսալի է սակայն որ Եւրոպայ կրնայ տակաւին պատարազմ արգելուլ :

ՀԱՍԱՐԱԿԱՅԻՆ ԿՐՈՒԹԻՒՆ

Ի ՅՈՒՆԱՍՏԱՆ

Նախնական կրթութեան մասին Յունաստանն արդէն հաւասարած է Եւրոպական ազգերէն բազմոց : 1831ին Յունաստանի նախնական դպրոցաց թիւը միայն 170 էր, ուր 7000 դպրոցականք կը յաճախէին : Տասն տարիներ բաւական եղան այդ դպրոցաց թիւը 450 ի, և աշակերտաց թիւն 35000ի հանելու : 1874ին, նախնական դպրոցներու թիւը 1130ի հասած էր, 70000 աշակերտօք Յունաստանի հասարակայնի կրթութեան նախարարն անգրեւադրոյն նայելով, նախնական դպրոցաց թիւն այժմ 1194 է, ուր 1206 ուսուցիչք և 79,114 աշակերտք կան : Յունաստանի մէջ աղըւայոց 100ին 65ը դպրոց կ'ընթան, և 747 բնակիչ զուրկ դպրոց մը կայ : Բազում շրջանակներ (քովիւն) մէկէ աւելի դպրոց ունին, և միլիոն հաշուով ամեն երկու շրջանակի զըլուսն 3 դպրոցք աւելի կ'ընայ : Մէն մի դպրոցականի զըլուսն կրթութեան տարեկան ծախքը 19 1/2 տրախմիլ չափ է, (տրախմիլ մէկ ֆրանկ է) բնակիչ զըլուսն ալ 86 լէվիլմ (սանթիմիլ) կ'ընայ, նախնական կրթութեան համար տարին 1,612,000 տրախմիլ ծախք կը լինի, որոց 190,000ը կառավարութեանց կը վճարուի, մըլնացաւ շրջանակաց կողմէ կը հայթայթուին : Բոտ որում այս վերջնաց հասոյթներն 9 միլիոն տրախմիլ կը հաշուին, նախնական կրթութեան ծախքը հասոյթիւր մէկ վեցերորդն է զերթիւր :

Երկրորդական և բարձրագոյն դաստիարակութեան պէտքը կը ըլլալոցն Հելլեն երկրորդական դպրոցք, և վարժարանք (թիմնադք) : առաջնոց մէջ կ'աւանդուին իտալե, Յունարէն, Լատինարէն, Անգլո-հայերէն, Պալանթիւն, Ռուսաբանութիւն, Երկրաչափութիւն, Գաղլիերէն, և Գրութիւն, միջնորդութիւնադք տանցմէ գտն ունին իրենց հիմնադրաց մէջ Ռուսոյութիւն (Մաթիմաթիք), Բնական գիտութիւն, Բնալուծութիւն, և ֆիլիսոփայութիւն : Երկրորդական

վարժարանաց թիւն է 136, ուր կան 280 ուսուցիչք և 7,446 աշակերտք : վարժարանաց (թիմնադք) թիւն ալ 18 է, 120 դասաւանդութիւն և 2,460 ուսանողներ, կառավարութիւնն առնոյ 1,060,000 տրախմիլ յատկացուցած է 587,000ը երկրորդական դպրոցաց և 470,000ը վարժարանաց համար :

Բարձրագոյն կրթութիւնը կը ներկայացնէ Աթէնքի Համալսարանն, որ 1841ին հիմնեցաւ 292 ուսանողներով, որոց թիւն այժմ 1,250 է : Համալսարանը յորս հիւղունի (ֆալիլթի) Աստուածաբանութիւն, 4 դասաւանդութիւն, Իրաւագիտութիւն, 12 դասաւանդութիւն և 7 բանախօսներով : Բժշկութիւն, 21 դասաւանդութիւն և 7 օգնական դասաւանդութիւն : և ֆիլիսոփայութիւն, 11 դասաւանդութիւն և 5 օգնականներով : Համալսարանին կից կը գտնուին դիտարան մը, բուսաբանական պարտէզ մը, 3 ալ և ալ անասկ հիւանդանոցք, և մատենադարան մը, որ հարիւր քսան հաշար (120,000) հատոր գիրք կը պարունակէ, (ճիշդ մեր Ղալաթիոյ Աղգալին Մատենադարանին պէս) :

Համալսարանին հիմնարկութեան թուականէն այսինքն 1841էն մինչև 1877, 36 տարած մէջ 8,000 ուսանողք անցած են համալսարանական կարգերէն, և առնցմէ 22ը վիլայական ստացան Աստուածաբանութեան մէջ, 1,258ը Իրաւագիտութեան մէջ, 1,118ը Բժշկութեան մէջ, 286ը Գեղարդործութեան մէջ և 132ը ֆիլիսոփայութեան մէջ : Աթէնքի Համալսարանէն ելող այս ուսանողք սապէս կը բաժնուին : Պետականէն, (այսինքն՝ Յունաստանի թերակղզի մասէն) 2689 ուսանող : Յունաստանի ցամաքային մասէն՝ 1,379 ուսանող, կղզիներէն՝ 350 : Եպիքոսէն՝ 470, Թեսաղիայէն՝ 322, Մակեդոնիայէն՝ 320, Կ. Պոլսէն և Թրակիայէն՝ 335, Կիրիտէն՝ 332, Կիպրոսէն՝ 27, փոքր Ասիայ ծովեկրեայ կղզիներէն՝ 444, Եղիպտոսէն և Սուրիայէն՝ 282, Ռուսմանիայէն՝ 57, Աւստրիայէն և Գերմանիայէն՝ 10, Իտալիայէն, Գաղլիայէն, Անգլիայէն և Ամերիկայէն՝ 11 ուսանող : Բոլոր դասերը ձրի են, ծախք մէկ մասը Հելլեն կառավարութիւնը կը վճարէ, մէկ մասն ալ Համալսարանն, որ առանձին 290,000 տրախմիլ եկամուտ ունի :

Այս ցուցակը մեծապէս հըրաւահալիչ է Հայոց համար եւս :

ԱԶԳՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՀՊՍԱԿՈՒԹԻՒՆ

Աղղութիւն և հպատակութիւն կրնա՞ն տարբեր լինիլ : Տիրոջ ցեղէն տարբեր ցեղ մ'իւր աղղութեան ամեն յատկանիշները պահպանելու պահանջում կրնա՞յ ընել : Բոտ սմանց այդ, ըստ այլոց ոչ և եւ ըստ Պոմպոնիէի, անշուշտ ո'չ : Առանց այս փառնիկ խնդրոյն քննութեան մանրու, անօգուտ չեմք համարել մեր ընթերցողաց առջև դնել խորհրդաբանական վիճարանութիւն մը, որ մօտերս տեղի ունեցաւ նոյն նիւթին վրայ, և բաւական ուշադրութիւն դրուեց իւր քաղաքացի մէջ, Բյուսիոյ իշխանութեան ներքեւ Լեհական դաւաւ մը կայ, Բոգէնի Մեծ Գրքութիւնն, որ Լեհացի բնակչաց նկատմամբ Պիլիգմարքի կառավարութեան բռնաւոր ընթացքը՝ նուազ քաղաքակրթ կառավարութեանց իրենց արդարեւ հպատակաց համար բռնաւոր ընթացքը կը յիշեցնէր, թէ և տարբեր տեսակէտով : Ամայս 10 ին և 11 ին Բյուսիական Խորհրդարանին մէջ տեղի ունեցած վիճարանութիւն մ'այս իրողութիւնն երեւան հանց :

Բյուսիոյ միւս բոլոր դաւաւացի մէջ ճշիւ քաղաքական չեղող ամեն խնդրոց նկատմամբ տեղեկան ինքնակառավարութեան դըրութիւն մը կայ, և գաւառական

մասնակալաց անգամները տեղական ժողովուրդէն կ'ընտրուին : Բայց Բոգէնի Լեհական դաւաւն մէջ, ըստ այն դատութեան զոր Բյուսիոյ ներքին գործոց նախարարը կ'առաջարկէր, գաւառական մասնակալաց անգամները յորդոյին կառավարութեան անուանեալ մարդիկ պիտի լինէին Այս բացառիկ օրէնքին նպատակն է Բյուսիական հպատակ Լեհացիներն ոչ միայն քաղաքական պէս այլ և նիւթական տեսակէտով անպատա գիւրքի մը մէջ դնելու ուրիշ Գերմանացի հպատակաց հետ բաղդատմամբ, և թէ է՞ր այսպիսի դրութիւն մը կ'առաջարկուէր, ապ. որ պատճառը կառավարական բանախօսից կողմնէ բացորոշապէս յայտնուեցաւ, Պ. Պ. Շթապլէվսքի, Մակալիսքի և Բանթաք անուն Լեհացի երեսփոխանաց կողմնէ :

Պ. Շթապլէվսքի Բոգէնի դաւաւն գրաւման ժամանակ Բյուսիական կառավարութեան հանած հըրամանագիրն յիշեց, 1815 մայիս 13 թուականու, որ այդ Լեհական դաւաւն բնակչաց նոյն ազատ օրէնքները կը խոստանար զորս կը վայրեն միւս Բյուսիական դաւաւք : Այս խոստումը չըսուեցաւ, զոչոյ Պ. Շթապլէվսքի, ոչ թէ վասն զի ո' և է հակառակութիւն կայ Բոգէնի Լեհական և Գերմանական տարբերայ միջև, զի ոչ քաղաքական խնդրոց Պիլի Լեհացիք և Գերմանացիք միմարան կը գործեն համաձայնութեամբ, այլ վասն զի Լեհացիք դեմ կը դնէին այն ձեռնարկներուն, զորս Պեդլինի կառավարութիւնն ի գործ կը դնէր իրենց աղղութիւնը ջախջախելու նպատակու : Լեհացիք միշտ անկեղծապէս փառնաբան են Գերմանիայ միւթեան, և մօքէ չեն անցունել թէ Գերմանացիք իրենց աղղութեան յաղթանակը տաւ ննել յետոյ, ուրքան եռանդեամբ պիտի աշխատէին Լեհացուց աղղութիւնն անհնապանելու : «Մի մոռնաք, յարեց Պ. Շթապլէվսքի, թէ ամեն անիւրաւութիւն զոր մեր վըրայ ի գործ կը դնէք, անմիապէս կ'իմացուի Գերմանիայ սահմաններէն անդին : Թէ ինքնակալութիւնը մէջ Գերմանացիք իրենց աղղութիւնը կը պաշտպանեն (Մամարաց և Սլաւաց դէմ), և թէ Գերմանական աղղութիւնը նոյնպէս վատաղի մէջ է Ռուսիայ Պալլիքեան դաւաւաց մէջ և ի ֆէյթմ (մայրաքաղաք Հունգարիոյ) :

Պ. Բանթաք ալ ըսաւ թէ Լեհացիք Գերմանացուց չափ բարի հըպատակներ են Բյուսիոյ, և հետեւաբար կառավարութիւնն իրաւունք չունի զրկել զիրենք այն ազատութիւններէն, որք չհորհրած են տէրութեան Գերմանական գաւաւացի Լեհացի զինուորն Գերմանացուց քրիկը կուտած է ամեն Բյուսիական պատերազմաց մէջ : Լեհական քաղաքացիներ Գերմանականին չափ կանոնաւորապէս իւր տարբերքը կը վճարէ Բյուսիական կառավարութեան, և Լեհացիք ծնողք իրենց աղղաքը Բյուսիական դպրոցներ կը զրկեն : «Երբքին գործոց նախարարն յայտարարեց թէ, ըստ Պ. Բանթաք, տէրութեան Գերմանացիք հաւասար վարմունք տեսնելու իրաւունքն ստանալու համար, մեք Լեհացիքս Գերմանացի պէտք է լինիք, բայց երբեք չպիտի լինիք : Նախարարութիւնն իրաւունք չունի այդպիսի բան մը անգլի պահանջելու : զի մեք Լեհացիք ծնած ենք, և Լեհացիք ենք, մեք մեր պատմութիւնն ունենք, և ինչ որ եմք այն պիտի մնամք հակառակ այն ամեն տընօրէնութեանց, զորս կառավարութիւնը կրնայ ձեռք տանուլ զմեզ Գերմանացիներու նպատակաւ : Բըրքական կառավարութիւնն այն

